

**ԵՐՐՈՐԴ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
= Ի ՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԸ =
= ԵՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ =
ՀԱԿԱ - ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ.**

Ժողովրդի Բանուր, եւ Դիւղաց, Պաշտպանութեան եւ Պրոֆ-սպորտների մարտիչների ու գործարանային կոմիտեների միացեալ նիւտիւմ արած զեկուցում 1920 թ. Մայիսի 28-ին:

Г. Зиновьев. III КОММУНИСТИЧЕСКИЙ ИНТЕРНАЦИОНАЛ
И МЕЖДУНАРОДНАЯ КОНТР-РЕВОЛЮЦИЯ.

Государственное Издательство. Армянская Секция.
РОСТОВСКОЕ И-Д. ОТДЕЛЕНИЕ.
1920

3КИ1


2-64

սակարգային կուի միջազգային կրկէսի ոյժերի փոխ-
յարարերութիւններին, ամբողջ անց ու դարձը ըմբռնու-
լու համար:

Սկսած 17 թւականից, այն բողեկց, երբ իմպե-
րիալիստական կուրը թնքում էր, երբ սկսեց աչքի ըն-
կնել անդլո-ֆրասիական կապիտալի յաղթանակը նրա
ժրցակցի՝ զերմանական կապիտալի վրայ, այդ բողեկց
իւրաքանչիւր գիտակից բանուր կարող է և պիտի տար-
բերի միջազգային կրկէսում 3 պիտուոր միջազգային
Ֆակտորներ,*) իւրաքանչիւր բանուր ուշի ուշով պի-
տի իւրացնի այս տեսութիւնը և ինքն իր
համար պարզ կերպով պիտի պատկերացնի
թէ ինչ է կատարում մեր շուրջը այժմ: Այս ե-
րեք գիտուոր ֆակտորները հետեւեալներն են,
ստաճին, միջազգային ոյժը, այն երկրների ըտրժու-
սագիւմ է, որոնք յաղթեցին Գերմանիային, այն երկր-
ների դաշնակցութիւնը, որին կարճ կերպով անուանում
ենք Անտանտա, որը կրում է Ազգերի լիզա պետական
անունը: Երկրորդ խմբակցութիւնը միջազգային բան-
ուրակն այն միութիւնն է ինչպէս նա կար պատե-
րագմից առաջ, որը այժմ կործանուած է մեր աչքերի
առաջ. ես ինկատի ունիմ Չ Ինտերնացիոնալը, որը
մինչև այժմ որոշ միջազգային դեր է խաղացել. Դեր-
ջապէս 3, Ինտերնացիոնալը բանուրների միջազգային
այն միութիւնը, որը զնալով դանում է հզօր պետու-
թիւն, գնալով որոշում է աշխարհի բախտը:

ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ

Ազգերի Լիգան կազմակերպեց այն բողեկն,
երբ անդլո-ֆրանսիական կապիտալը յաղթանակեց
գերմանական կապիտալին: Դուք յիշում եք ընկերներ,
այ կար մի ժամանակ, որը կարելի էր ազգերի Լի-
գայի մեղքամիտը կուչել, երբ մեղ բողբիս, այդ պատ-
ւելի ընկերակցութեան և թշնամիներին և բարեկամ-
ներին թւում էր, որ նա է աշխարհին հրամայողը,
թէ կուղ կարճ ժամանակով: Յիշեք թէ ինչպէս մի
տարի առաջ Ազգերի Լիգան որոշում էր միջազգային
հարցերը, նա կարող էր չեզօր պետութիւններից ա-
մեն մէկին հրամայել և նրանք ստիպւած էին նրան
բոլ: Մենք լիշում ենք այն ժամանակը, երբ Ազգերի
Լիգան միանկամ և անարգէլ թաղաւորում էր աշ-
խարհի վրայ, թելադրում էր իր պայմանները բոլոր
ժողովուրդներին, պահել էր իր ձեռքում թէ չեզօր և
թէ յաղթւած երկիրները: Թւում էր թէ կարճ ժամա-
նակով ամբողջ մարդկութիւնը պիտի դանւէ Ազգերի
Լիգայի խնամատարութեան տակ և իսկապէս բոլոր
ժողովուրդները նրան ենթարկուած էին և միայն Խոր-
հրդային Հանրապետութիւնը, որը այն ժամանակ
այնքան ուժեղ չէր, որքան այժմ, կաշոդացաւ իրեն
շայլութիւն թոյլ ապ, չը ճանաչելու Ազգերի Լիգան:
Մենք կորցնելու պիտի չունենինք, որովհետեւ մենք մեր
բողբ կապերը բարձուական աշխարհի հետ խզել
էինք, որովհետեւ մենք կուի կոչ էինք արել բուրժուա-
կան հատարակութեան: Այն ժամանակ Ազգերի Լի-
գայի աստղը շատ բարձր էր կանգնած, այն ժամա-



4883-88

նակ թուում էր, թէ պատերազմից ծնել է մի նոր միջազգային ոյժ, որը պիտի կառավարի աշխարհը:

Երկրորդ Ինտերնացիոնալը այնքան հիպոտուած էր Ազգերի Լիգայի ոյժից մի տարրի առաջ, նա այնքան հաւատացած էր որ սա անցողակի ոյժ չի այլ մնայուն, որ այդ Երկրորդ Ինտերնացիոնալը իր բախտը ամբողջովին կապեց Ազգերի Լիգայի հետ: Երկրորդ Ինտերնացիոնալի պարագլուխներից մէկը, Քրանսինգը, որը այժմ Շէշիայի բուրժուական կառավարութեան պրէմիէր-մինիստրն է, Երկրորդ Ինտերնացիոնալի համադումարում Վիլսոնի պատահնա է արտատանել, նա համեմատել է Վիլսոնին հանգուցեալ ժորէտի, Քրանսիական բանտարութեան պարագլխի հետ: Միանգամայն պարզ կերպով Երկրորդ Ինտերնացիոնալի պարագլուխը ասել է, որ Ազգերի Լիգան ներկայանում է իր զազափաբների ղեկավարը:

Դեռ մի լրիւ տարի էլ չի անցել, իսկ Ազգերի Լիգայի աստղը արդէն պարզ կերպով մայր մտնելով վրայ է: Ինչպէս պատահեց այդ: Իսկապէս, ինչպէս ամենաուժեղ պետութիւնները, որոնք մինչև այժմ չը բււած ու չհղած լարւած պատերազմում յաղթանակ տարին, ինչպէս նրանք այսքան կարճ ժամանակայ ընթացքում կարողացան ցած իջնել: Այդ պատահեց ընկեցնել հետեւեալ կերպով: Երբ Քրանսանգլո-ամերիկական և խալալիան բուրժուազիան յաղթեց զերմանացիներին, նրան թւաց, որ զլրաւորը գեւ յեակումն է, բայց երբ նա սկսեց բռնակի պորտցումը, երբ նա ոչեօք է փորձէր կատուցել իր

ժողովրդական անտեսութիւնը, այն ժամանակ պարզեց, որ նա կանգնած է կոտորած աաշտակի առջև, պարզեց, որ իր սեփական ձեռքերով նա քանդել է իր երկրի արդիւնարերսական ոյժերը, որ նա այնքան քանդել է ժողովրդական անտեսութիւնը, որ նրա երկրները այն աստիճան աղքատացել են, որ նրանք չեն կարողանում սրեկ չափով ստեղծել մի ինչ որ բուրժուական տնտեսութիւն, հին բուրժուական հիմունքների վրայ: Իուք դիտէք, որ յաղթող երկրները իրենց ժողովուրդներին խստատնում էին ով գիտէ ինչ երջանկութիւն, բայց ոչինչ տալ չեն կարողանում: Մի փոքրիկ օրինակ, աշնան վերջին յաղթող երկրները ցրտի գէժ պայքարող կամիտէ հիմնեցին: Նրանք չոյսամեայ պատերազմի ընթացքում, իրենց շահերի համար նրա երախը ձգելով միլիոնաւոր բանտրական կեանքեր, խստամտում էին իրենց ժողովուրդներին պատերազմը յաղթութեամբ վերջացնելու ոչեղքում գանազան երջանկաթիւններ, բայց անա երբ նրանք յաղթեցին, այժմ նրամցնում են իրանց ժողովուրդներին ցրտի գէժ պայքարող կամիտէն: Նրանց մօտ վառելիքի գարծջ տւելի վատ դրութեան մէջ է քան մեզ մօտ՝ Խուստտանում, Փարիզում գուծը այնտեղ է հասել, որ երբ մէկը մի կտոր ածուխ է ձգում, այդ կտորի վրայ յարձակում են երկխաների մի ամբողջ խումբ, երկխաներ, որոնք այդ կտոր ածուխը ցանկանում են տանել իրանց մօրը. որ նա հնարաւորութիւն տւենայ ճաշ պատրաստելու, բայց այդ երկխաներին քշում են ոստիկանները:

Ռուբժուական պետութիւնները, որոնք յիմա-
րացրին իրանց ժողովուրդներին շորսամեայ պատերազ-
մի դադափարով, որոնք խոստացել էին առաջնորդել
իրենց ժողովուրդներին ուեռեայ երկիր, այդ բուր-
ժուական պետութիւնները, երբ պիտի վճարէին մուր-
հակների դիմաց, դուրս եկան բոլորովին սնանկացած
գրութեան մէջ: Այս բանը վճուեց Ազգերի Լիգայի
բախար: Մի տարի առաջ նա հօր կազմակերպու-
թիւն էր, որի յետից գնում էին մենշեիկները, ո-
րոնք պնդում էին, թէ բոլշեիզմը մի բացիլ է, որ
ծնւում է պարտած երկրներում, Ռուսաստանը
պարտւած է, ստում էին նրանք, պատերազմը նրանց
համար անյաջող եղաւ, Ռուսաստանում ծնւեց բոլշե-
իզմը: Նուազարեան նոյնպէս պարտութիւն կրեց, այն-
ակող նոյնպէս առաջ եկաւ բոլշեիզմը: Գեղմանեան
պարտութիւն կրեց այնտեղ նոյնպէս ծնւում է բոլշե-
իզմը: Անգլիայում, որը յազթեց, կը ծաղկի մենշեի-
հական բարեմիտ, հաճելի դեմոկրատիան:

Մի քանիսները ենթադրում էին, որ իսկապէս կը լի-
նի այնպէս, ինչպէս մենշեիկներն են դուշակել, բայց
այն հանգամանքը, որ այդ երկրների կառավարու-
թիւնները անզօր հանդիսացան որեւէ ժողովրդական
անտեսութիւն վերականգնել հին բուրժուական հիմ-
քերի վրայ, որ նրանք կարողացան շատ բան խոս-
տանալ ժողովրդին և աւին միմիայն թշուառութիւն,
արցունքի ծովեր, տանջանքի անդունդներ, այդ իսկ
հանգամանքը պատճառ եղաւ, որ Ազգերի Լիգան գե-
ղը ծաղկած սկսեց թառամել, նրանք, այդ հօրներն

ու ուժեղները, որոնց դիմաց նապուխտը լաճուկ էր
թոււմ, նրանք, որոնց դիմաց աշխարհը ծունկի էր
եկել մի տարի առաջ, ամիս ամօր յետից տխրեցին
թօշնել, կորցրին աստիճանաբար իրենց ազգեցոթիւ-
նը, սկսեցին սայթաքել աստիճանից աստիճան, նրանց
բնույց պատարեցին, նրանց պարտեցին հողի առ-
նել Բալկանեան, Սկանդինաւեան և Վալի չեզօք պե-
տութիւնները: Այժմեան իրերի գրութիւնը այնպէս է,
որ Ազգերի Լիգան այլևս չի ներկայանում աշխարհի
տէրը, նա օր օրի վրայ կազմալուծում է:

Մի մօմենտ էլ կարեւոր դեր խաղաց Ազգերի Լի-
գայի կազմալուծման ինդրում, այդ՝ Լիգայի իր մէջի
անհամաձայնութիւնն էր: Այս հանգամանքը յատկա-
պէս կարեւոր է, այժմեան մեր ապրումների անսակե-
ակց: Իւրաքանչիւր բուրժուական համաձայնութիւն
ժամանակաւոր բնոյթ ունի: Յիշէք մինչև պատերազ-
մը պայութիւն ունեցող Երեւակ Դաշնակցութիւնը և
կապիտալիստական բուրժուական պետութիւնների
ուրիշ միութիւնները, որոնց էութիւնը կայանում էր
նրանում, որ նրանք իրարու զաշնակից էին անու-
նում, բայց ուշադրութեամբ հետևում էին իրար, միշտ
քարը ծայում պահած, որ յարմար բողէին ձգեն ի-
րանց զաշնակցի վրայ, որը միեւնոյն ժամանակ և
թշնամի է: Այսպէս է բուրժուական պետութիւնների
բնութիւնը: Հէնց որ ազգերի Լիգային թւաց, որ նա
իշխում է աշխարհի կիսին, զաշնակիցները չիմացան
ինչպէս բաժանել իրար մէջ գեղմանական նաւատորմը,
ինչպէս բաժանեն զապութիւնների իւզուրի պատանները:

միջազգային աւագակներն դաշնակցութիւնը սկսեց քանդել բոլոր կապերից: Այդ հոյի վրայ սկսեցին բզկանել իրար Յապոնիան և Ամերիկան: Այն ժամանակ, երբ նրանք արտաքուստ իրար հետ բանակցութիւններ էին վարում դաշնակցութեան համար, ներքուստ նրանք պատրաստուում էին կուր և նաւեր էին շինում իրար վրայ յարձակելու համար: Բացի դրանից, արեւմուտքում ուժեղացւոյ յնգափոխական շարժումը նոյնպէս նպաստեց Ազգերի Լիգայի անկման: Այդպիսով, այն հանգամանքը, որ Ազգերի Լիգան չը կարողացաւ վերականգնել ժողովրդական անտեսութիւնը, այն, որ Լիգայի իր մէջ պատահուումն առաջացաւ և վերջապէս այն հանգամանքը, որ Քրօլերիկեան քացիքը երեւաց նաև յաղթողներին երկրներում, այս բոլոր հանգամանքների արդիւնքը եղաւ այն, որ Լիգան կազմալուծուում է մեր աչքերի առջև թղթեայ սնակի պէտ: Ազգերի Լիգայի այդ կազմալուծումով կարելի է բացատրել այն, որ նա մեզ վրայ է բաց թողնում շղթայակազ գամփոններին—լեհական բուրժուազիային: Յրանսիական կապիտալը ցանկանում է ինչ էլ լինի, իր և Ռուսաստանի միջև, և ուստական պրոլետարիատի և Ֆրանսիական պրոլետարիատի միջև պատենչ ունենալ, դրա համար նրան անհրաժեշտ է Լեհաստանը: Յիշեցէք ընկերներ, թէ ինչ է ասել Կլէմանտոն, Ֆրանսիական բուրժուազիայի այդ ձեռքառնակիչը. նա ասել է, որ ինքը ցանկանում է պաշտպանել Յրանսիան առողջագահական պատենչով, որպէսզի Քրօլերիկեան քացիքը ներս անցնել չը կա-

րողանայ և որ դրա համար պէտք է օգնել Լեհաստանին: Անգլիական կապիտալը նոյնպէս իհարկէ շահապրրդուած է նրանում, որ Սորերգային Իշխանութիւնը, ջախջախի նրանք ասում են Խորհրդային Իշխանութիւնը, նրանք գիտեն, որ բոլշևիզմը կապիտալիստական աշխարհի կոմժանումն է, նըրանք գիտեն, որ անգլիական բանուրները բօլշևիկներ կը դառնան, բայց միաժամանակ նըրանք վախենում են, որ չը լինի թէ բօլշևիկները դէմ մղած կուր հաշին Յրանսիան հարստանայ, չը լինի թէ Յրանսիան Լեհաստանի հետ դաշնակցութիւն միջազգային պետութիւն դառնայ, դրա համար էլ Անգլիան այս կուում բուն է իւրատեսակ դիւրբ: Անգլիական կապիտալիստները չեն օգնում լեհական ազաներին, դեռ ևս աւելին, անգլիական կապիտալիստները խիստ տանջանքներ են ապրում: Անգլիական թագաւորին շատ ցանկալի է լեհական ազաների միջոցով խեղդել Խորհրդային Ռուսաստանը, իսկական, կրթւած անգլիացիների և մաքրարին ջնալմէնների համար դրանից մեծ երջանկութիւն մտածել իսկ չէր կարելի, բայց դրա հետ միասին նրանք վախենում են, չը լինի թէ Սորերգային Իշխանութեան ընկնելու հաշին Յրանսիան զօրանը լեցնի: Բայց իրերի այժմեան դրութեան մէջ նրանց սչինչ չէր մնում անել, քան բաց թողնել Ռուսաստանի վրայ լեհական ազաներին: Յրանսիական զօրքեր նրանք ուղարկել չեն կարող, սրովհետև զօրքերը չեն գնար, անգլիական զօրք ուղարկել այն ժամանակ, երբ Մոսկուա է գալիս անգլիական 8 միլիոնամոց բանուրութեան

պատգամաւորութիւնը, նրանք չեն կարող: Նրանք
 նոյնիսկ Գեղամանիա չը կարողացան զօրք ուղարկել,
 փրանկֆուրտն էլ սեւամորթ զօրքերի միջոցով բռնե-
 ցին: Սա փաստ է: Կարծի է արդեօք Ալզերի Լիզան
 ոչսպիտի պայմաններում գնալ Խորհրդային Իշխանու-
 թեան դէմ, այն հրդէհի դէմ, որը բռնկում է ամբողջ
 աշխարհում: Նրանք բռնում են ամեն բան, ինչ իրենց
 կարծիքով վերկարար է և այլ վերկութիւնը նրանք
 դտել են լեռնայն աղաներին մեզ հետ թշնամացնելու
 մէջ: Ասաջ նրանք ցանկանում էին մի դ հետ ճաղ-
 նիս խաղաղութեան դաշն կապել: Եղել է ժամանակ
 — երեք ամիս սրանից առաջ — երբ նրանք փորձել են
 մեզ ըմնել, ամերիկական թերթերը լուրջ կերպով
 բարկացել էին մեզ վրայ, թէ ինչու Խորհրդային Իշ-
 խանութիւնը նրանցից շոգեմեքենաներ չի դնում, ին-
 չով իրանց շոգեմեքենաները միւս երկրների կապի-
 տալիսաների շոգեմեքենաներից վատ են: Նրանք,
 միւսների ջգրու շապուկներն մեզ հետ պայմաններ և
 ստանաւական համաձայնութիւններ կնքել, բայց դրա-
 նից յետոյ ամեն ինչ փոխուեց: Ալզերի Լիզայի առջև
 ամեն անգամ, երբ նա հաւաքում է իր Բարձրագոյն
 Խորհրդում, անխուսափելի կերպով կանգնում է սու-
 սական հարցը, որից նա ոչ մի կերպ չի կարողա-
 նում խուսափել և չի էլ կարողանում վերջացնել նը-
 բան և Խորհրդին մասնակցողները ցրում են առանց
 որեէ բան որոշելու, որպէսզի նորից հաւաքելով նորից
 բարձրացնեն այդ յաւիտեան նոր, անխնալ սուսական
 հարցը, որը նրանց համար սուր հարց է, որը նրանք
 չեն կարողանալու վճռել մինչև համաշխարհային յե-

զափոխութիւնը կը վճռի Խորհրդային պետութիւննե-
 րի եւրոպական դաշնակցութեան կազմակերպութիւնը:
 (բուն ծափահարութիւններ):

Այսպէս ընկերներ, մենք պիտի հաշի առնենք
 այն միջազգային խմբակցութիւնը, որը բացում է
 մեր աչքերի առջև: Հասկանալու համար այն ոյժը,
 որը գործում է միջազգային կրկէսի վրայ: Այժմ ազ-
 գերի Լիզան զտնւում է այնպիսի գրութեան մէջ, որ
 ոչ միայն բանւորները, այլ նաև իրենց սեփական եր-
 կրքների բուրժուազիան ասում են, «Ստատանան
 այնքան էլ սոսկալի չի, որքան պատմում են»: Ալզե-
 րի Լիզայի բուրժուական կառավարութիւնները չը
 կորեզացան կանոնաւորել ոչ միայն միջազգային յա-
 բարերութիւնները, նրանք չը կարողացան կարգի
 բերել ժողովրդական անտեսութիւնը իրենց երկրնե-
 րում:

Այս զրոթեան մէջ Անտանտայի բուրժուական
 պետութիւնները զլուխները կորցրած այս ու այն
 կողմն են ընկնում, կիրառելով նաև մեր պրիոմները,
 ժողովրդական անաեսութեան վերականգնման համար:
 Ի միջի այլոց նրանք փորձեցին մատի փաթաթեան շի-
 նել, և դա, ընկերներ, շաւ ընտրոջ է, մեր 10 ժամեայ
 բունորական օրը և հարկադրական աշխատանքը — «Օ»,
 ասում էին նրանք, բողբիկները լուրջ մարդիկ են,
 պէտք է ճետակել նրանց օրինակին»: Եւ անա նրանք
 Փարիզում, Լոնդոնում, փորձեցին անցկացնել 10 ժա-
 մեայ բանւորական օրը: Դուր զիտէք ընկերներ, թէ
 դրան ինչ պատասխանեցին նրանց բանւորները, Բան-
 ւորները սասցին, «Հեռացէք, մեզ համար 10 ժամ էլ

կգործենք, իսկ ձեզ համար մի բազմ էլ չենք գործի:» (բուսն ծափ): Այն ժամանակ պարոն դաշնակիցները նկողացան և ուրիշ ձի նստեցին: Իսկոյն սկսեց այսպիսի աղիտացիա, բոլորիկներն իրենց մօտ ճորտական կարգեր են հաստատել, 10 ժամեայ բանւորական օր են մտցրել, մեխել են բանւորներին իր տեղում և թող չեն տալիս շարժելու: Չարոնայք դաշնակիցները սկսեցին կրկնել այս խնդրի շարջը մեր խոհուն և իմաստուն ասոց. ղեմուկ, այսպէս կոչւած մինչեկիկների ձառերը: Անտանտայի այս ամբողջ քաղաքականութիւնը բացատրուած է նրանով, որ այդ տխրահոյակ Ազգերի Լիգան զանուած է կազմալուծման ճանապարհին: Իտալական կոապարութիւնը, որը նոյնպէս ներկայացուցիչներ ունի այդ Լիգայում, անհամբեր սպասում է այն բազմին, թէ երբ հնար կուեննայ մեզ հետ յարաբերութիւնների մէջ մտնելու: Ազգերի Լիգան, կրկնում եմ, կազմալուծուած է մեր աչքերի առջև, նա այլևս դադարում է միջազգային քաղաքականութեան կարևոր Փակտօրը լինելուց: Եւ ինչ էլ որ նա ձեռնարկելու լինի, ամեն ինչ էլ դուրս է գալիս նրան ի վնաս, հաստատելով չափազանց պարզ ու հասկանալի այն սուածը, որ երբ Աստուած մօրդու կորցնել ցանկանայ, առաջ խելքը կաննի: Ահա օրինակ: Անտանտան զինաթափ արեց Բալկարիային, թողեց նրան միայն 10000 զինուոր, այս զինաթափութիւնը ինարկէ բոլորական գիւղացիների համար շատ ձեռնառու էզաւ, սրանք Փրանսիական զինւորներից զնեցին օղզ զէնքերը և իրենք զինւեցին: Եւ այժմ բալկարական բանւորներն ու գիւղացիները ուզած բոլորին կարող

են իշխանութիւնը իրանց ձեռքը ձդել: Այս մոմէնտը մօտենում է, գէպքերը փոթորկում են ամբողջ Բալկարիայում, այնտեղ գիւղական ընտրութիւններում կոմունիստական կուսակցութիւնը ահագին մեծամասնութիւն է կազմում: Մօտաւորապէս նոյնը կարելի է ասել և Սերբիայի մասին, որ թ թիրթ ունենք և կոմունիստական կուսակցութեան 110000 անդամներ:

Ազգերի Լիգան Բալկաններում այսպիսի անպուճի քաղաքականութիւն վարում է ոչ թէ նրա համար, որ գտնուած է անելանելի դրութեան մէջ: Պատերազմից յետոյ նա չի կարողանում մի բազմ իսկ անել, որը վերջ ի վերջոյ չնպաստէր իր իսկ քայքայման: Ահա առաջին միջազգային խմբակցութեան դրութիւնը:


ԴԵՂԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԿԸ.

Ի՞նչ դրութեան մէջ ենք զտնուած մենք երկրորդ խմբակցութիւնը՝ ինտերնացիոնալը միջազգային քաղաքականութեան այդ երկրորդ Փակտօրը: Ես ի նկատի ունիմ համաձայնական սոցիալ. ղեմակրատների ինտերնացիոնալը: Մենք կռիւ յայտարարեցինք այս պատուելի ընկերակցութեան, այն բազմէից, երբ 2-րդ ինտերնացիոնալը պաշտպանել սկսեց իմպերիալիստական պատերազմը: Մօտ մի տարի սրանից առաջ մենք հիմնեցինք յեղափոխական կոմունիստական Ինտերնացիոնալը, շատ ժամանակ չէ անցել այն օրից, բայց մենք իրաւունք տնինք ասելու, որ մի տարւայ ըն-

Թացքում համոճախատական Ինտերնացիոնալը Չարդեյի
 իր հակառակորդին Չարդեյ Զ-րդ զեղին Ինտերնացիո-
 նալը և զուր-իշուր արեց նրան Բնկերներ, ես ար-
 զէն ասացի, որ Զ-րդ Ինտերնացիոնալը մի տարի
 առաջ փորձեց վերածնել, երբ նա տեսաւ որ պո-
 տերագժը վերջանում է, որ դուրս է լողում Ազգերի
 Լիգան, զեղին սոցիալ-դեմոկրատները փորձեցին խ-
 կոյն և եթ կպչել իրենց նորա իրով Ազգերի Լիգային:
 Ահն ինչի մէջ նրանք աշխատում էին ենթարկել
 այդ Լիգային, չհամարձակելով մի քայլ իսկ նրա
 կարգադրութիւններից չհեղել: Բայց հէնց այն պատ-
 ճառով, որ պատերազմից յետոյ համաձայնական Ին-
 տերնացիոնալը իր բողբ կապից Ազգերի Լիգայի
 հետ, որը ինքը գտաւապարտած էր մահւան, պատճառ
 եղաւ, որ Զ-րդ Ինտերնացիոնալը, Ազգերի Լիգայի
 յետեից գնում է գէպի իր վախճանը, մտնում է իր
 զերեղմանին: Այս տարւայ ընթացքում մենք աւելի
 ևս նկատեցինք այս Ինտերնացիոնալի այլաստումը,
 քան պատերազմի ընթացքում: Երկրորդ Ինտերնա-
 ցիոնալի պարագլուխները ասում էին, քանի դեռ շա-
 րունակում է պատերազմը պարզ է, որ Ին-
 տերնացիոնալը զեռ մի կողմ պիտի թազաննր, Ին-
 տերնացիոնալը խաղաղ ժամանակայ մի խաղալիք է,
 իսկ երբ պատերազմ է տեղի ունենում, բանորրները
 իրար միս պիտի ուտեն, իրար ըզկտեն: Բայց անա
 պատերազմը վերջացաւ և խաղաղութիւն տիրեց: Ի՞նչ
 արին նրանք այս խաղաղ ժամանակ: Նրանք սկսեցին
 ստատիկ հետով աջորդի պէս պատել Ազգերի Լիգայի

շարժը: Այդ ժամանակ մենք տեսանք խկապէս զգե-
 թի մի պատկեր: Եւէդական սոցեալ—դեմոկրատ և 2 Ին-
 տերնացիոնալի նախագահ Բրանտինդը, այժմ ներ-
 կայանում է իւր շէգական Թագաւորի պրեմիեր-մի-
 նիստը: Երբ շէգական թագաւորը ներութեան մէջ
 էր, նա կանչեց իւր սեփական սոցիալ-դեմոկրատին և
 ասաց նրան, օգնիր ինձ այս նեղ դրութիւնից դուրս
 գալու, ընդունիր մինիստր-նախագահի պաշտօնը: Ի՞նչ
 էք կարծում, այդ պատահեց այն պատճառով, որ շէ-
 գական Թագաւորը մտաւ սոցիալ-դեմոկրատական
 կուսակցութեան մէջ (ճիճադ, ժափահարութիւն):
 Երկրորդ Ինտերնացիոնալի պարագլուխները պատե-
 հազմից յետոյ իրենց Թագաւորի մինիստր-պրեմիերները
 դարձան և երբէք Եւէդիայում այնքան լրբութիւններ
 չեն կատարել, որքան այժմ, Բրանտինդի կառավա-
 րութեան օրօք: Եսկէն, Եւէդիմանի կառավարութեան
 դինորական մինիստրը նոյնպէս Երկրորդ Ինտերնա-
 ցիոնալի պարագլուխներից է, նա նոյն իսկ նրա Գոր-
 ժադիս համիակէի անգամ է, այդ նոյն մտադրծ Ես-
 կէն, որը զինւած ոյժով վնայ մեր գերմանացի ըն-
 կերների—սպարտակների դէմ և վերջապէս աղա Պիլ-
 սուդակին, որը Լեհական սոցիալիստական կուսակցու-
 թեան անդամ է, որը նոյնպէս մտնում է Երկրորդ
 Ինտերնացիոնալի մէջ: Ես ձեզ երեք փայլուն անուններ
 աւի, Երկրորդ Ինտերնացիոնալի ներկայացուցիչների
 3 անուններ—Պիլսուդիս, Բրանտինդ և Եսկէ: Արանք
 Երկրորդ Ինտերնացիոնալի երկր շաղտըն են:
 Ինդիքը իմացելով ինչն էր Ինտերնացիոնալի այս

1923
 1921
 1923
 1921



պարագլուխների անհատական անկման մէջ չէ, այլ ուն-
 թողջ մի գառակարգի այս գեղին Ինտէրնացիոնալի ամ-
 բողջ մի սերնդի անկման, որը ստակում, կազմաւու-
 ճում է մեր աչքերի առջև: Աւելի դարձելի բան երևո-
 կայել չէր կարելի, երկրորդ Ինտէրնացիոնալը այն դրու-
 թեան է ընկել, որ աւելի ընկնել այլ ես չէր կարելի:
 Այն ամենը, ինչ որ ազնիւ էր ու յեզափոխական, խու-
 սափել է Երկրորդ Ինտէրնացիոնալից: Վերջին երկու
 ամսում Երկրորդ Ինտէրնացիոնալից դուրս են եկել 6
 մեծ կուսակցութիւններ, կուսակցութիւններ, որոնք
 հաշուում են 900,000 անգամներ, կուսակցութիւններ,
 որոնք մի քանի տասնհակ օրաթերթեր ունեն: Բայ
 մենք բոլոր գիմոդներին չենք ընդունում Երրորդ Ին-
 տերնացիոնալի մէջ: Մենք ասում ենք, Երրորդ Ին-
 տերնացիոնալը բաց դուռ չէ, նա միջանցք չէ, ուր
 ամեն ցանկացող մտնել կարողանայ: Այդ վից մեծ
 կուսակցութիւնները, որոնք դուրս են եկել Երկրորդ
 Ինտերնացիոնալից և ցանկանում են մտնել Երրորդ
 Ինտերնացիոնալը՝ հետևեալներն են. Ծրանստիական միա-
 ցիալ կուսակցութիւնը, որի գլուխ կանգնած է
 Ֆրանսիական մենշեիկ Լօնգէն, Կառլ Մարկսի թոռը
 որը իգէպ, Մարկսից շատ քիչ բան է ժառանգել:
 Ծրանստիացի բանուորները այնքան են ձախացել, որ
 ստիպեցին այդ կուսակցութեան հեռանալ Երկրորդ
 Ինտերնացիոնալից: Անգլիայի անկախ բանուորական
 կուսակցութիւնը որոշել է հեռանալ Երկրորդ Ինտեր-
 նացիոնալից, Ամերիկայի սոցիալիստական կուսակ-
 ցութիւնը, որը ամբողջ ժամանակ երկդիմի գիրք էր

ունել, որոշել է հեռանալ Երկրորդ Ինտերնացիոնա-
 ց և մտնել Երրորդ Ինտերնացիոնալը: Գերմանական
 ողոր սոցիալիստական կուսակցութիւնը, այսպէս կոչ-
 ւած «Անկախները», որոշել է հեռանալ Երկրորդ Ին-
 տերնացիոնալից, Շեյքարիայի և Իսպանիայի պաշտօ-
 նական կուսակցութիւնները նոյնպէս: Նոյն իսկ Մար-
 տովի որջի սուս մենշեիկները Մասկայի Խորհրդի
 պարլիի 23-ի նիստում յայտարարեցին, որ նրանց
 նմտրոնական կոմիտէն որոշել է դուրս գալ Երկրորդ
 Ինտերնացիոնալից: Ես կարծում եմ, ամեն մի մեն-
 իգդի պատմութիւնը իմացող կ'ժգտայ և կ'ասի. խոր-
 մակում է Երկրորդ Ինտերնացիոնալի նուակը, եթէ
 մենշեիկեան միները թողնում են նրան (ժափանարու-
 թիւններ): Միջազգային բաղաբականութեան երկրորդ
 օգակը՝ Երկրորդ Ինտերնացիոնալը այնքան կապել է
 իր բաղբը Ազգերի Լիգայի հետ, որ այժմ փաստօրէն,
 էր միանում է Ազգերի Լիգան, նրա յետեից նաև գե-
 րեզման է գնում Երկրորդ Ինտերնացիոնալի գիակը:
 Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել Երկրորդ Ինտերնա-
 ցիոնալը, որպէս խոշոր ազդեցութիւն ունեցող կազ-
 մակերպութիւն, որը 2 միլիոն անգամներ ունէր, այս
 Երկրորդ Ինտերնացիոնալը մեր աչքերի առջև կոր-
 անում է, մեր աչքերի առջև կորչում է: Այժմ նա
 անկանում է հիմնել պրոֆսոյուդների վրայ: Իսկա-
 պէս, Անգլիայի, Ամերիկայի, մասամբ նաև Աւստրա-
 լիայի չափաւոր պրոֆսոյուդները, փորձ ցին նոյնպէս,
 ինչպէս 2 Ինտերնացիոնալը իրենց բախաը կապել Ազ-
 գերի Լիգայի հետ — Դուք պատէք ընկերներ, որ ի միջի
 այլ փառքերի, Ազգերի Լիգան ցանկացել էր լուծել և

Բանւորական խնդիրը և նա ստեղծեց միջազգային
 յանձնաժողով, որը պիտի վճռէր այդ բանւորական հաբ-
 ցը այդ միջազգային յանձնաժողովի կողմի երկու
 երրորդը բաղկացած է կապիտալիստներէր, պրոֆսո-
 յուզների ներկայացուցիչներից: Փրանսիական սոցիա-
 լիստները, անգլիական արեղ-ուշիտնիստները ազգերի
 կիզայի ձեռքով ստեղծած այս միջազգային յանձնաժո-
 ղովի քարտուղարներն էին, նրանք այնտեղ վճռում էին
 բանւորական խնդիրը, բայց բանւորական խնդիրը և
 մեռածական հարցը իսկոյն և եթ այնպէս էին ձուլում
 իրար հետ, որ անջատել անհնար էր լինում, ուստա-
 կան հարցը մշտական կապւած է այն բուրժուական
 կազմակերպութեան հետ, որը Ազգերի կիզա է կոչում:
 Բայց մենք տեսնում ենք, որ նրանց միջազգային յանձ-
 նաժողովից ոչինչ դուրս չեկաւ, մեզ մօտ Մոսկւա ե-
 կան անգլիական հիւրեր, անգլիական բանւորների ներ-
 կայացուցիչները, այս պատգամաւորութեան գալուստը
 ընկերներ, ունի տնային համալիտարեային նշանակու-
 թիւն. նրանց գալուց առաջ, մարտ ամսի կիսիցին տե-
 ղի էր ունեցել արեղ ուշիտնիստների համագումարը,
 այս միութիւնը ինչպէս յայտնի է, բոււական պահպա-
 նողական է և դրա հետ զուգընթացաբար առաջին ան-
 գամ անգլիական բանւորական շարժման պատմու-
 թեան ընթացքում, տեղի ունեցաւ պրոֆսոյուզներ
 Բօլշեիկական համագումարը: Այդ մասին մենք տեղե-
 կութիւն տակ ենք մեր պաշտօնական օրգանում, որտեղ
 առած է, թէ այդ համագումարում ներկայանում էր
 200 իտոյր միութիւններ, պրոֆեսիոնալ շարժման պա-
 րագլուխները բոլորովին այլ լեզուով էին խօսում: Իսկ

գիտէր, որ Անգլիական արեղ-ուշիտնիստները իւրա-
 քանչիւր կոնգրէսում հանքերի և երկաթուղիների նա-
 ցիոնալիզացիայի (պետականացման) բանաձև են ըն-
 դրւում, այդ նացիոնալիզացիան զարձեղ է արեղ-ուշի-
 տների համագումարների սովորական մանեովը, այս
 մանեովրակ արեղ-ուշիտների պարագլուխները խօսքե-
 րով ընդառաջ են գնում բանւորների յեղափոխական
 տրամադրութեան, բայց զործի մէջ այս դատարկաօ-
 սութիւնը, ոչ մի արդիւնք չի տալիս, և տնա անգլիա-
 կան պրոֆսոյուզների այս զուգընթաց համագումար-
 րում առաջին անգամ Անգլիայի պատմութեան մէջ,
 բանաձև ընդունեց, որ պէտք է վճռել թագաւորին և
 բուրժուազիային երկրից, հիմնել թորհրդային Իշխանու-
 թիւն, հաստատել պրոլետարիատի դիկտատուրա և մի-
 այն, այն ժամանակ կարելի է խօսել նացիոնալիզացիա-
 լի մասին: Մեր Անգլիայի ընկերները ասում են, մեզ
 պէտք է թորհրդային Իշխանութիւն, մեզ պէտք են թոր-
 հրդային կազմակերպութիւններ: Բայց ընկերներ, ով
 ծանօթ է անգլիական կոնսերվատիզմին (պահպանողակա-
 նութեան), ով ճանաչում է անգլիացիներին, նա գիտէ,
 որ անգլիական բանւորները իւրատեսակ գծեր ունին՝ սո-
 ցիալիզմը կրոնական նախապաշարմունքների հետ հաշ-
 տեցնելու:

Անգլիական սոցիալիստներից շատերը կվակեցնեն
 (աղաներ), եկեղեցի են գնում և աղօթում են Աստուծոն:
 Վերջերս մեզ մօտ էր եկել յայտնի պացիֆիստ թոր-
 հրդային Իշխանութեան կողմնակից Լինքերզը: Մենք
 խօսեցինք նրա հետ թորհրդային կառուցման մասին,

շատ բաներում նա մեզ հետ համաձայն էր, մեր կարգերը ըստ ամենայնի նրան զիւր էին զալիս, միայն մի բան նրան շիտթեցնում էր, այդ մեր բանւորների կրօնատէր շիտթեցնում էր և իր Անգլիա վերադառնալուց յետոյ նա առաջին միտինգը գումարեց Ռուսաստանի մասին, որի վերջում այդ պայտֆիտաը բացականչել է, կէցցէ Խորհրդային Իշխանութիւնը, թող աէը Աստուծը օգնէ մեզ: Այս բանը Անգլիայի համար, ընկերները շատ բնորոշ է:

Ընկերներ, անգլիական բանւորական շարժումը ունի արտակարգ համաշխարհային նշանակութիւնը ի դուր չէ Մարքսը առել, այն յեղափոխութիւնը, որին չի մասնակցում Անգլիան, դա փոթորիկ է մի բաժակ ջրի մէջ: Եւ ահա, երբ Անգլիայում բանը հասաւ զուգընթաց համազուգարին, մենք առում ենք Անգլիայում ինչ որ մի բան է կատարում, որը բուրժուազիային լաւ բան չի գուշակում: Անգլիական պատգամաւորութեան մեզ մօտ դալը համաշխարհային պատմական ղէպը է: Բուրժուազիան նրանց հաւատացնում էր, որ հէնց որ նրանք Ռուսաստան մտան, իսկոյն բանա *) կը տարւին, նրանց ասում էին, որ մեզ մօտ՝ Ռուսաստանում գլխիվայր են ման զալիս և այլն և այլն: Այժմ երբ անգլիական բանւորները երես առ երես առան խորհրդային կարգերը, նրանք յարգանքով վերջրին գլխարկները Խորհրդային Իշխանութեան առջև, նրանք, այդ հպարտ բրիտանացիք,

*) Բնագրում ասած է Վ. Կ. (Черезвычайная Комиссия) բայց որովհետև այստեղ Արտակարգ Յանձնաժողովը չէր արտայայտել մտքը, մենք փոխեցինք Վ. Կ. բանալի:

որոնք սովոր են կարծելու, որ իրենցից լաւ ոչ ոք ստեղծել չի կարող, այդ բրիտանացիք առան մեր աշխատանքը, մեր թափը, մեր պայքարը, բանւորների տրամադրութիւնը, այդ բրիտանացիք յարգանքով վերցնում են իրենց գլխարկները Խորհրդային Իշխանութիւն ստեղծող ուստ բանւորի ղիմաց. (բունձափ.) բոլոր երկրների բանւորները ուզարկում են իրենց ներկայացուցիչներին մեզ մօտ սովորելու համար: Թիթեաը ճրային մօտեցածի պէս, աշխարհի բոլոր ծայրերից մեզ մօտ են խոչում պատգամաւորներ ու ներկայացուցիչներ: Վերջին հիմքը, որի վրայ կանգնած է Երկրորդ Ինտէրնացիոնալը, դա կրօնական աստառով, պանպանողական պրոֆուսյուզներն են, որոնք կը ջնջեն մօտ ժամանակներում, որովհետև Անգլիական պատգամաւորութեան գալը անհետանք չի անցնիլ: Բանւորների ներկայացուցիչների գալը մեզ մօտ, մի երկիր ուր երեք տարի Խորհրդային Իշխանութիւն գոյութիւն ունի, նշանակում է, որ III Ինտերնացիոնալը կ'ամբանայ և կ'ծաղկի ոչ թէ օրերով, այլ ժամերով, իսկ II Ինտերնացիոնալը վերջնականապէս կը կազմալուծուի: Այդպիսով այժմ մենք պիտի առնենք, որ երկրորդ խմբակցութիւնը, այնպէս խմբակցութիւն, որը գնում է առաջինի յետեից և կուպել է նրա հետ իր բախտը, առաջին խմբակցութեան պէս ղէպի անկումն է դնում: Այժմ նոյնիսկ չի լինում տարբերիլ ուր է կլէմանտն և ուր Պետլուբան, այդքան սերտ կերպով ձուլուել են իրար այդ ղէմքերը: Պետլուբան, որը իրեն սոցիալիստ է անանում, հա-

մաճայնութիւն է կայացնում Փրանսիական կապիտալի ջարդ րարներէ հետ և մեր գէմ է գնում, մենք իբր թէ կուում ենք լեհական բուրժուազիայի հետ, բայց լեհական աղաները ներկայանում են Փրանսիական բիրժայի վարձկանները, նրանք այնպէս են ուզում ստրկացնել գիւղացիներին ու բանուորներին, որին նոյնիսկ Գինիկիներ չի ձգտել: Տեսնելով, որ Դենիկիներ ոչնչով իրենց օգնել չի կարող, Փրանսիական կապիտալիստները իրենց լիբր նպատակների համար վարձում են Պետլիւրային, որը իրեն սոցիալիստ է անւանում, որը Երկրորդ Ինտերնացիոնալին մասնակցող կուսակցութեան անդամ է: Ահա ընկերներ, ինչպէս նախատեսած չեն պատմութեան ուղիները: Այժմ որ չէր կարող նախատեսել, որ Երկրորդ և Երրորդ Ինտերնացիոնալների պայքարը կը լինի ոչ թէ բանակուի միջոցով, ոչ թէ թղթի վրայ, այլ կտիւ կը լինի զէնքը ձեռքին: Այժմ որ չէր համար ընկերներ գաղտնիք չէ, որ Երկրորդ Ինտերնացիոնալի ներկայացուցիչները բուրժուազիայի ազնւոններն են, որ բուրժուազիան Երկրորդ Ինտերնացիոնալի գիմարը հագել է, մեզ հետ կուելու համար: Բուրժուազիան չի կարող իր զիրքերը առանց կուի յանձնել: Սատկիլուց առաջ նա ամեն տեսակ միջոցներ ձեռք է առնում իր դրութիւնը փրկելու համար: Բուրժուազիան ստիպւած է ամեն տեսակ գրոջակի տակ թագնելու: Մէկ նա իրան անւանում է Ազգերի Լիգա, միւս անգամ մի այլ անուն: Բայց ըստ էութեան

մենք պիտի գիտնանք, որ զորձ ունինք մի թշնամու՝ բոլոր երկրների բուրժուազիայի հետ:

Այսպէս է և միջազգային քաղաքականութեան երկրորդ Ֆակտորի դրութիւնը: Անցնում եմ երրորդ Ֆակտորին՝ կոմմունիստական Ինտերնացիոնալին: Մաս մի տարի առաջ նա միմիայն պաշտօնաբէր էր: Մենք կարծում էինք այն ժամանակ, որ մի շարք տարիներ պիտի անցնեն, որ այս գաղափարը իրականանայ, մինչև այդ գրոջակի տակ կանգնի բանուորապետարդը, բայց գէպըների ընթացքը կանխեցին ամենավառ երևակայութիւնն իսկ: Մեզանից իւրաքանչիւրը չի կարող իրեն պատկերացնել, թէ որքան մեծ է այժմ կոմմունիստական Ինտերնացիոնալի նշանակութիւնը: Կոմմունիստական Ինտերնացիոնալի կոչերը գուրս են գալիս համարեայ բոլոր լեղոններով, Աւստրալիայի, Ամերիկայի բանուորները, գեռ չենք խօսում Եւրոպայի մասին, մեծ հետաքրքրութեամբ հետևում են Ինտերնացիոնալի գարգացման: Մի փոքրիկ օրինակ, թէ որքան մեծ է Ինտերնացիոնալի ազդեցութիւնը: Վերջիս, բանուորական մի փոքրիկ գիւղում, ուր 2--3 հազար ձկնորսներ են ապրում պաշտօնական գրաւել էր կոմմունիստական գրականութիւն: Ձկնորսները փոտորկալի բողոք բարձրացրին յիդափոխական փոստի գրաման գէմ և նորվեգիական կառավարութեան պաշտօնական ստիպւած էր խոնարհարար ներողութիւն ինչդրելու: Այդ ապացուցանում է, թէ ինչպէս աշխատանքի հասարակ մարդկանց մէջ Երրորդ կոմմունիստական Ինտերնացիոնալը իր համար զիրք է գրաւել:

Ես առիթ ունեցայ խօսելու նորվեգիացի մի ընկե-
րոջ հետ, այն երկրի ընկերոջ հետ, որը չի
ժամանակցել պիտոերազմին, այնտեղ չգիտեն ինչ
է քաղցն ու կարիքը, սակայն միաժամանակ
քանուր գտակարը այնքան է ամբացել, այն-
քան է հասունացել յեղափոխութիւնը, որ կոմմունի-
ստական կուսակցութիւնը դրութեան յիսկատար
տէրն է, նա յայտնի կերպով կազմակերպում է բոլոր
էիկական խորհուրդներ. այժմ նրա կառավարութեանը
ոչ ոք հաշի չի առնում: Նորվեգիական կառավարութեան
մէջ նստած են պատեիլի ծերունիներ, որոնց ամենա-
կրթները 72 տարեկան է (ծիծաղ ծափ.) այս կառավա-
րութիւնը հին փթած բուրժուական աշխարհի սիմ-
վոնէ և նա մինք տեսնում ենք որ Նորվեգիայում, որ
աւել հեշտ է ապրելը, ուր սոցեալ—դեմոկրատիան ա-
մեն իրաւունքներ ունի, բուրժուազիան իր վերջին օ-
րերն է ապրում: Այսպէս է դրութիւնը նաև ամբողջ
աշխարհում: Այժմ արդէն, ամենաբժամիր դեպքերն էր-
ները պիտի համաձայնեն, որ հին բուրժուական հա-
սարակալարը գերիզման է գնում, նրա վերջին, փթած
ասամները թափում են. Բուրժուազիան սատկում է
մեր աչքերի դիմաց:

Իմացէք ընկերներ, որ եթէ նրա համար արևի
ճառագայթ փայլի, դա ոչ այլ ինչ կլինի եթէ ոչ պար-
ուաի ամառ» (дабы лето), եթէ մենք այս գնահա-
տութեան մէջ իրաւացի ենք, իրաւացի ենք
նաև մնացեալում, որովհետև մնացած բոլորը սը-
րանից է բխում: Անցեալ տարի, երբ բուր-
ժուազիան ձի էր նստել, ձիու բթածակերից

ծնի էր հիւում, այն ժամանակ ասում էին՝
«կատուից ուժեղ զազան չկայ»: Բայց ահա անցաւ մի
տարի, թեր է Ազգերի Լիգան: Ամեն ինչ հիմքից կոր-
ծանում է, Մենք այն ժամանակ ասում էինք թէ միւ-
նոյն է, որքան էլ ուժեղ լինի բուրժուազիան, սոցիա-
լիստական յեղափոխութիւնը մտանում է, որովհետև
այսքան մարդկանց գո՞ն, կլանող իմպերալիստական պա-
տերազմը պարտաւարական յեղափոխութիւնից քացի,
ոչնչով վերջանալ չէր կարող: Այս պուշակութիւնը այժմ
փաստ է մեր աչքերի դիմաց: Կոմմունիստական Ին-
տերնացիոնալը մեծ ոյժ է գտնում, կուսակցութիւն-
ները ձգտում են նրա մէջ մտնել և գրո՞ն են տալիս
մեր ինտերնացիոնալի դռների վրայ, մենք նրանց
ասում ենք: գրո՞ն մի տէք դռների վրայ, ապա թէ ոչ
ստիպւած կլինենք երկու ուժեղ կարմիր զինուորներ
կանգնեցնել այնտեղ, որ ամեն հանդիպողին ներս չը-
թողնի (ծիծաղ):

Բունդը, որ Երկրորդ Ինտերնացիոնալի անդամ
էր, այժմ դուրս է եկել նրանից և ցանկանում է
մտնել Երրորդ Ինտերնացիոնալի մէջ: Մենք նրանց
ասում ենք. այդպէս հեշտ կերպով մտնել չի լինի, կա-
րելի է մտնել միայն այն դէպքում, երբ դուք գործով
ցոյց կտաք, որ ուզում էք անկեղծօրէն կուել պարտի-
սարական յեղափոխութեան համար: Նայնն ենք ասում
մենք բոլոր նրանց, որոնք մի տարի առաջ ասում էին
Երրորդ Ինտերնացիոնալը, հա, հա, հա, բոլորիկների
կրակալութիւնն է: Այժմ մենք ասում ենք բոլոր
նրանց, որոնք անցեալ տարի չէին հաւատում մեր
յաղթանակին. թող մի քիչ նրանք կանգնեն բանուր-

ների միջազգային ստեղծագործութեան դռների մօտ (լուսն ծափահար):

Կոմմունիստական Ինտերնացիոնալը, ինչպէս ես ձեռք արդէն ասացի, այժմ ներկայանում է որպէս ամենամեծ սյժը, Կպատմեմ ձեռք մի փոքրիկ փաստ: Մեզ մօտ էր եկել Չիկագոյի ամերիկական մի թերթի ներկայացուցիչ, ես նրա հետ զրոյց ունեցայ, խօսում էինք զանազան հարցերի մասին. յանկարծ նա այտղիսի հարց է առաջարկում. ասացէք խնդրեմ, շատ ազիտատորներ էք ուղարկել Ամերիկա Կոմմունիստական Ինտերնացիոնալի կողմից: Ես պատասխանեցի, որ մենք նոյն իսկ մի հատ ազիտատոր չենք ուղարկել Ամերիկա այն պարզ պատճառով, որ ձեր կապիտալիստները Կոմմունիստական Ինտերնացիոնալի ամենալա ազիտատորներն են (ծափ): Մեզ ոչ մի ուրիշ ազիտատորներ պէտք չեն: Ամերիկայի կապիտալիստները մի շարաթւայ ընթացքում բանդ նստեցրին հինգ հազար կոմմունիստ: Սա ազիտացեա չէ: Ամերիկական բուրժուազիան իր սահմանադրութեան մէջ յատուկ կէտեր մտցրեց պառլամենտի ընտրութիւնների մասին, կէտերը, որոնց հիման վրայ ինչ որ ասում է մարդու և քաղաքացու մասին, եթէ այդ քաղաքացին կամ մարդը կոմմունիստ է, նրան չի վերաբերում: (Միծայ և ծափահար): Եթէ քաղաքացին պէտք եզած ժամանակ ձայներ ստացել է պառլամենտի ընտրութիւններին, եթէ նա կոմմունիստ է, պառլամենտ չի ընկնում, այլ 20 ամեայ տաժանակիր աշխատանքների թիրարան:

Մենք պիտի իմանանք, որ ներկայ մոմէնտում

կուրծք կրծքի դիմաց կանգնած են երկու դասակարգեր՝ բուրժուազիան և պրոլետարիատը. մենք պիտի գիտենանք, որ բուրժուազիան իր վախճանի նախորեակին է դառնում, դեռ մեզ շատ սանջանքներ կարող է հասցնել, շատ արգելքներ կարող է դնել մեր ճանապարհին, բայց դրանից մենք չպիտի շփոթենք որովհետեւ բուրժուազիան հին, փթած դասակարգ է, մենք ապագայի դատակարգն ենք: Ահա թէ ինչպիսի պայմաններում է մղում լեհական պատերազմը: Այս պատերազմը Վարշաւայի և Մոսկւայի ընդհարումը չէ, սա լեհական բուրժուական հանրապետութեան կռիւը չէ ընդդէմ Ռուսաստանի, սա բանւոր դասակարգի միջազգային կռիւն է ընդդէմ կապիտալի, սա պատմական մեծ պայքարի դէպքերից մէկն է, որին կարճ կերպով կարելի է անւանել՝ Երրորդ Ինտերնացիոնալի կռիւը Նրկրորդ Ինտերնացիոնալի հետ, սա այն մեծ դրամայի մի կտորն է, որը պատմութիւնը գրել է մեր աչքերի դիմաց, որը կոչւում է պրոլետարական, սոցիալիստական յիզափոխութիւն: Միայն այնպէս կարելի է հասկանալ այն, ինչ որ կատարւում է:

Ինչպէ՛, կան մի շարք պատճառներ, որպէսզի մենք լեհական յարձակումը մեր սրտին մօտ ընդունենք, մենք պիտենք, որ այդ յարձակումը սպառնում է ուկրայինական գիւղացիներին, մենք գիտենք որ լեհական ազաները ցանկանում են Պետլիբայի հետ խեղդել Ռեկրայինան: Իդուր չեն ասում ուկրայինական սրամիտ զեղջուկները, որ «պիտիւրա» խօսքը առաջ է եկել «պիտուեա» (հանդոյց) բառից, որը Պետլիբայի ցանկանում է հազցնել ուկրայինացի գիւ-

գօցու վզին: Ահա այն երեք հիմնական Փակտորները, որոնք առաջ են քաշում միջազգային պատմութեան բոժի վրայ: Ահա թէ ինչպէս ենք հասկանում իրերի ներկայ գրութիւնը:

Երկու շարքի առաջ Կոմմունիստական Ինտերնացիոնալը մի կոչով դիմեց ամբողջ աշխարհի ժողովուրդներին, որի մէջ մենք կոչ էինք անում երկաթուղու բանւորներին չը տեղափոխել մեր թշնամիների ռազմաժողովները. երեկ մենք բաւականութեամբ կարողացինք, որ Անգլիայի բռնակիրների միութիւնը, ամբողջ աշխարհի կարող միութիւններից մէկը, լսեց մեր ձայնը և որոշեց ոչ մի զինւորական բնաշը բարձել, որոնք նշանակւած կը լինեն Լեհաստանի համար (ծափ): Ահա բանւորների իսկական միջազգային եղբայրութիւն, ահա իսկական Ինտերնացիոնալը, ահա բանւորների իսկական եղբայրութիւն: Բուրժուազիան գլխին պիտի տայ այն սխալի համար, որով նա առաջացրեց լեհական արկածը: Իժուար է ենթադրել, աւելի մեծ յիմարութիւն, քան այն, որ թոյլ տւին իրենց գաշնակիցները, լեհական աշաներին մեր գէժ լարելով: Պիլսոնգսկուն Կարմիր գրօշակի շքանշան պիտի ներքել, որովհետեւ նա իր յարձակումով արագացրեց յեղափոխութիւնը Լեհաստանում, Գերմանիայում և ամբողջ աշխարհում: Պէտք է մտածել, ինչո՞ւ արին նրանք այս յիմարութիւնը. իհարկէ ոչ թէ նրա համար, որ նրանց մօտ խելօք մարդիկ չը կան, Լօյդ Ջօրջը, որը նրանց շտաբի հրամանատարն է, շատ լաւ է հասկանում թէ ինչ է անում, այլ խնդիրը այն գրութեան մէջն է, որի մէջ գտնու-

ւում է բուրժուազիան, նրան ուրիշ անելու ոչինչ չի մնում, որովհետեւ կըրժանման դատապարտւած դասակարգը չի կարող յիմարութիւններ չանել: Ինչպէս անկման դատապարտւած կառավարութիւնը ռեակցիայից բարեփոխումների է դիմում, փչացնելով իր գրութիւնը թէ առջինով և թէ երկրորդով, այդպէս է Ազդերի Լիգան երկրորդ դեղին Ինտերնացիոնալի հետ, չի կարող առանց պատմական յիմարութիւն անելու մի քայլ անել: Բուրժուազիան, որը իրեն աշխարհի թագաւորն էր համարում, որը իրեն համարում էր անսխալական մի աւելորդ. մեխ է խփում իր դադալի ծածկոցին:

Լեհական պատերազմը մեզ շատ դժուարութիւնների տեղիք կը տայ: Իժուար է իհարկէ խօսել պատերազմի մասին, երբ մարդիկ ծայր աստիճան հողնել են այն սպանդանոցից, որը գոյութիւն ունէր միջազգային մասշտաբով 5 տարիների ընթացքում. քայց միջազգային համաշխարհային մասշտաբով այս լեհական պատերազմը խոշոր քայլ է, միացնելու բոլոր մենշեիկներին և նման մարդկանց, որոնք վերջին պահուն, ժամի 10-ին մրայն կը հասկանան թէ վերջապէս ինչ է կատարում լաշտատարած երկրագնդի վրայ, այս մարդկանց ամենաազնիւ և ամենից լաւ գործը կը լինի այն, որ միանան այն ոյժի հետ, որը կոչուում է կոմմունիստական Ինտերնացիոնալը. (Բուռն երկարառե ծափահարութիւն): Նւագախումբը նւագում է Ինտերնացիոնալը: Մի ձայն տեղից. Կեցցէ Կոմմունիստական Ինտերնացիոնալը, կեցցեն մեր պարալուիները՝ Լենինը, Տրոցկին, և Ջինովկերը:

